



Ա. Ա. ԱՆԴՐԵՅԵՎ

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵՎ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ

Պրովեստարները ըստ յերկիրների, միացն'ք

Ա. Ա. ԱՆԴՐԵՅԵՎ

ՅԿՄ

ՄՏՈՒԳՎԱՆ Է 1961 Ք.

147
6875

**ՅԵՐԻՏԱԱՐԴՈՒԹՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ
ԿՈՍՅԵՐԻՏԱՐԻԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Համբ/բ/ն Կենտրոնի ֆարսուղար
ընկ. Ա. Ա. Անդրեյեֆի հատը
Համ/ԿՅԵՄ X համագումարում
1936 թ. ապրիլի 15-ին



A $\frac{11}{8337}$

А. А. АНДРЕЕВ

КОММУНИСТИЧЕСКОЕ ВОСПИТАНИЕ
МОЛОДЕЖИ И ЗАДАЧИ КОМСОМОЛА

Армпаргиздат, Эривань

Ընկերնե՛ր, ՀամԿ(Բ)Կ Կենտրոնական կոմիտեյի
հանձնարարութեամբ թույլ տվե՞ք բուլղերիկյան ջերմա-
դին վողջույն հաղորդել լենինյան կոմյերիտմիութեան
X համագումարին: (Բուռն յերկարատև ծափեր: Բա-
ցականչութուններ. «Կեցցե՛ր ընկեր Ստալինը, ուռա՛»):

ԽՍՀՄ-Ն ՀԱՂԹԱՆԱԿԱԾ ՍՈՑԻԱԼԻՉՄԻ ՅԵՐԿԻՐՆ Ե

Ընկերնե՛ր, լենինյան կոմյերիտմիութեան X համա-
գումարը գումարվեց այն հսկայական աշխատանքից
հետո, վոր խորհրդային իշխանութեունը և մեր յերկ-
րի աշխատավորութեունը ՀամԿ(Բ)Կ-ի ղեկավարու-
թեամբ կատարել են սոցիալիստական շինարարութեան
բաղմագան ասպարեզներում: Լենինյան կոմյերիտմիու-
թեունն ամենատակալիվ մասնակցութեունն և ունեցել այդ
ամբողջ աշխատանքում:

Ընկեր Կոստրեվի ղեկուցման մեջ բազմակողմանի
կերպով ծավալվեցին լենինյան կոմյերիտմիութեան
անցած ճանապարհի հանրագումարները և նրա առաջի-
կա աշխատանքի խնդիրները:

Յերկրի ընդհանուր դրութեունը վերջին տարիներս
այնքան շատ և վտախել, վոր հնարավոր չէ վորեւե հա-

մատոտ ընդհանրացումով արտահայտել այդ բոլոր փոփոխությունները :

Սակայն, կարելի չէ ասել մի բան՝ այն, վոր 1922 թվականին մեծ Լենինի տված այն պատգամը, վոր մեր յերկիրը նեպական յերկրից դարձնենք սոցիալիստական յերկիր, կատարված է : (Ծափահարություն) :

Արդարև, ընկերներ, յեթե վերցնենք սոցիալիզմի առանձին հատկանիշները, ապա ինչո՞վ պետք է տարբերվի նոր հասարակակարգը, սոցիալիզմի հասարակակարգը, կապիտալիստական հասարակակարգից : Յեթե վերցնենք այն հիմնական սկզբունքները, վոր ձևակերպել են գիտական սոցիալիզմի ու կոմունիզմի հիմնադիրները՝ Մարքսը, Ենգելսը և մեր հեղափոխության նախապատրաստման ու իրականացման ընթացքում զարգացրել են Լենինն ու Ստալինը, և մեր յերկրի ներկա դրության վրա հայացք գցենք այդ սկզբունքների իրականացման տեսակետից, ապա գործը հետևյալ պատկերը կունենա. բացի պրոլետարիատի դիկտատուրայից, վորն, իհարկե, հանդիսանում է սոցիալիզմի հիմնական պայմանը և վորը, ինչպես դուք գիտեք, մեզ մոտ լրիվ իրականացված է հանձին խորհրդային իշխանության, —ապա սոցիալիզմի առաջին հատկանիշն այն է, վոր բանվոր գասակարգն իր ձեռքում իր սեփական սոցիալիստական խոչոր արդյունաբերությունն ունի : Առանց այդ կանոնադույն պայմանի սոցիալիզմ չի կարող լինել : Միմիայն մանրբուրժուական գասակարգերի ներկայացուցիչները, այդ թվում նաև նարոդնիկներն անցյալում, յերազում եյին այնպիսի սոցիալիզմի մասին, վորը կարող եր լինել նաև առանց խոչոր արդյունաբերության : Բայց դրանք

միայն վնասակար, մանր-բուրժուական յերազներ են :
Իրականութեան մեջ առանց խոչոր արդյունաբերու-
թեան վոչ մի սոցիալիզմ չի կարող լինել :

Մենք ցարկիզից, կալվածատերերից ու կապիտա-
լիստներից ստացանք, կամ՝ ավելի ճիշտ՝ խլեցինք
աղքատ, աղքատացին մի յերկիր, թույլ և կիսակոր-
ծան արդյունաբերութեամբ :

Այժմ, ընկերներ, մենք կարող ենք ասել, վոր ու-
նենք խոչոր առաջնակարգ սոցիալիստական արդյունա-
բերութեան, վորն արտադրութեան մեջ իր ունեցած
տեսակարար կշռով, արժեքային արտահայտութեամբ,
կազմում է մեր յերկրի ամբողջ արտադրանքի յերեք
քանորդ մասը, այսինքն՝ դերակշռող, հրամանատա-
րական դիրք է զբաղում : Դեռ 1927 թվականին մեր
արդյունաբերութեանը տալիս էր 13,3 միլիարդ ռուբ-
լու արտադրանք, իսկ 1935 թվականին մեր արդյունա-
բերութեանն արդեն տվեց 65,9 միլիարդ ռուբլու ար-
տադրանք :

Այժմ մենք մեր յերկրում ունենք արտադրութեան
ամենաբազմապիսի ճյուղեր, վորոնք առաջ չկային մեզ
մտտ և վորոնք նկատմամբ մենք ուղղակի կախում ու-
նեցինք կապիտալիստական յերկիրներէից : Այժմ մենք
ունենք արտադրութեան այդ ճյուղերը, սակայն չափա-
զանց կարևոր է նաև այն, վոր արդյունաբերութեան
հետ միասին մենք ունենք նաև լայն աշխատող սոցիա-
լիստական տրանսպորտ : Այդպիսով սոցիալիզմի առա-
ջին և հիմնական պայմանը լրիվ ու ամբողջովին կա-
տարված է մեզ մտտ : (Բուռն ծափահարութեամբ) :

Սոցիալիզմի յերկրորդ պայմանը, ընկերներ, հան-
քայնացված դյուղատնտեսութեան առկայութեանն է :

Դեռ քիչ և ունենալ միայն խոշոր արդյունաբերու-
թյուն: Պետք է ունենալ նաև սոցիալիստական գյուղա-
տնտեսություն: Մեզ մոտ սոցիալիզմ չէր կարող լինել,
յեթե մենք չկարողանայինք հսկայական քանակու-
թյամբ անհատական գյուղացիական տնտեսություն-
ները սոցիալիստական ռելսերի վրա փոխադրել կոլեկ-
տիվացման միջոցով:

Այժմ մենք զիտենք, վրա մեր գյուղատնտեսությու-
նը վերածվել է խոշոր հանրային տնտեսության հան-
ձին խորհանտեսությունների ու կոլտնտեսություննե-
րի, վորոնք զինված են հարյուր հազարավոր տրակ-
տորներով ու հարյուր հազարավոր ամեն տեսակ բարդ
գյուղատնտեսական մեքենաներով:

Գյուղատնտեսական արտադրության մեջ կոլտնտե-
սությունների ու խորհանտեսությունների տեսակարար
կշիռը 1935 թվականին արդեն կազմում էր 93,6 տո-
կոս: Այդ վկայում է, վոր մենք, բացի մնացած փոք-
րաթիվ անհատական տնտեսություններից, արդեն լի-
ովին ավարտել ենք մեր գյուղատնտեսության փոխա-
դրումը սոցիալիստական ռելսերի վրա: Այսպիսով սո-
ցիալիզմի յերկրորդ, դժվարագույն և կարևորագույն
սլաքմանն ևս մենք կարող ենք մեր բոլջևիկյան կու-
սակցության կողմից լիովին կատարված համարել:
(Բուռն, յերկարատև ծափահարություն):

Այդ կապակցությամբ, ընկերներ՝, նաև այն ահ-
մանը, վորն առաջ բաժանում էր քաղաքը գյուղից,
գյուղատնտեսությունը՝ արդյունաբերությունից, այն
հակասությունները, վորոնք առաջ դրոթյուն ունեյին
այդ յերկու բևեռների միջև, այժմ ջնջվում են բոլոր
տեսակետներից, և՛ արտադրության սլաքմանների տե-

ասկետից, և՛ կուլտուրական ու նյութական կյանքի տեսակետից :

Աեր յերկրում սոցիալիստական արտադրութեան տեսակարար կշիռը 1936 թվականին պետք է կադմի 98,5 տոկոս, այսինքն՝ ինչ-վոր չնչին մեկ ու կես տոկոսը դեռ վերաբերում է վոչ սոցիալիստական հատվածին :

Այսպիսով մենք կարող ենք ասել, վոր այն հինգ տնտեսաձևերի փոխարեն, վորոնց մասին Լենինն ասել է 1921 թվականին, — նահապետական, մանր-ապրանքային, մասնավոր տնտեսատիրական կապիտալիզմի, պետական կապիտալիզմի ու սոցիալիզմի տնտեսաձևերի փոխարեն, — մենք հասանք, ինչպես ասել է ընկեր Ստալինը դեռ ՀամԿ(բ)Կ XVII համագումարում, սոցիալիստական տնտեսաձևի անխախտելի տիրապետութեանը :

Սոցիալիզմի յերրորդ կարևոր հատկանիշն է դասակարգային հասարակութեան վերացումը : Ինչպես գիտեք, ընկերնե՛ր, բանվոր դասակարգն ու կուլտնտեսային գյուղացիութեանը մեր բոլշևիկյան կուսակցութեան ղեկավարութեամբ, կոմյերիտիութեան ամենուակտիվ մասնակցութեամբ, հաջողութեամբ վերացրին չահագործող բոլոր դասակարգերը մեր յերկրում : Այդ աշխատանքը կարելի չէ հիմնականում ավարտված համարել, չնայած այդ վոչնչացված դասակարգերի առանձին բեկորները փորձեր են անում զգալ տալ իրենց վնասարարութեան ու տեղորի զանազան գործողութեաննեղով, իրենց բուրժուական կուլտուրան, խուլիզանութեանը և այլն յերիտասարդութեան առանձին խավերի մեջ խցկելով : Այդ դասակարգերը մեզ մոտ

ընդմիջտ դուրս են յեկել թատերաբեմից և այլևս չեն վերադառնա: (Ծափահարութիւն):

Բայց կարևոր է, ընկերներ, մատնանշել նաև մի այլ բան, այն, վոր հասարակութեան վերակառուցման պրոցեսում, շահագործող դասակարգերի վերացման պրոցեսում, փոխվեց նաև հենց պրոլետարների դասակարգի հին եյությունը: Մի՞թե կարելի չէ, որին նաև, այսօրվա բանվորին համեմատել նախկին բանվորի հետ, մի՞թե կարելի չէ մեր բանվորին իր եյությամբ համեմատել կապիտալիստական յերկիրների պրոլետարի հետ, վորը զուրկ և արտադրութեան բոլոր միջոցներէջ, բացի իր աշխատանքային ուժից, վորն իրրև ապրանք վաճառում է կապիտալիստին: Մեր բանվոր դասակարգը կանգնած է իշխանութեան գլուխ, մեր բանվոր դասակարգը արտադրութեան հանրայնացված միջոցների սեփականատերն է: Իրանով իսկ մեր պրոլետարիատը, վերակառուցելով դասակարգային հասարակութիւնը, վոչնչացնելով շահագործող դասակարգերին, փոխեց նաև իր նախկին եյությունը: Նույնը կարելի չէ ասել նաև գյուղի վերաբերմամբ:

Մի՞թե ներկայիս կոլտնտեսական գյուղացին վորևէ չտիով նման է անցյալի գյուղացուն: Վոչ, ընկերներ: Առաջ գյուղացին ունենալով մի թիղ հողամաս, ըստ եյության աշխատում էր կուլակի համար, կալվածատիրոջ համար, մշտապես նրա ճորտը լինելով: Այժմ՝ կոլտնտեսականը խոշոր հանրային տնտեսութեան տերն է: Կոլտնտեսականի կյանքն ու նյութական պայմանները բնավ նման չեն նախկին գյուղացու կյանքին և նյութական պայմաններին: Ահա տեսնում եք, թե

ինչպիսի խոշոր փոփոխություններ են կատարվել նաև
այդ դասակարգերի՝ սրբուհեամարների դասակարգի և
գյուղացիների դասակարգի եյության մեջ: Ասենք,
դեռավ այլևի յե ջնջվում նաև բանվորների և կոլտըն-
տեսային գյուղացիության նախկին տարբերությունը:
Այս բոլորը մեզ լիակատար իրավունք և տալիս ասե-
լու, վոր սոցիալիզմի յերրորդ կարեւորագույն պայ-
մանն ել՝ դասակարգային հասարակության վերացու-
մը, հանդուրթյամբ կենսագործում և մեր բոլջևիկյան
կուսակցությունը: (Ծափահարություն):

Սոցիալիզմի չորրորդ, շատ կարեւոր պայմանն այն
և, վոր սոցիալիզմ չի կարող լինել, յեթե մարդիկ կա-
րիքի մեջ են և աշխատանք չեն կարողանում գտնել,
յեթե արմատախիլ չի արված գործազրկությունը:
ԽՍՀՄ-ում խոշոր արդյունաբերություն ստեղծվելու
և նրա աճման ու կոլտնտեսությունների կազմակերպ-
ման հետ միասին ընդմիջտ անհետանում և աշխատա-
վորության ամենալատթար պատուհասը՝ գործազր-
կությունը: Մեզ մոտ գործազրկություն չկա, չի լինի
և չի կարող լինել: (Ծափահարություն):

Մեր յերկրում, ընկերներ՝ բ, գերբնակչության վտանգ
չկա: Չկա նաև ապրանքի գերարտադրության վտան-
գը: Վորքան շատ մարդ լինի՝ այնքան լավ մեզ հա-
մար, վորքան շատ ապրանք լինի՝ այնքան լավ:
Թոխչքներով ու խոչընդոտներով զարգացող կապիտա-
լիստական արտադրությունը մշտապես կանգնած և
գերբնակչության, ապրանքների գերարտադրության
հարցերի առջև, ճգնաժամերի առջև, արտադրության
վորոչ սահմանների առջև: Այնտեղ մարդիկ մի կողմից
մեռնում են սովից, իսկ մյուս կողմից ապրանքներին

տեղ չկա, և արտադրութիւնը կրճատուում է: Այդ և կապիտալիստական արտադրութեան հակառակութիւնը, մի արտադրութիւն, վորը հիմնված է հալիւլայլ արժեքի արտադրման վրա, բանվորների շահադործման վրա, — մենք կործանեցինք այդ հիմքը: Մեզ մոտ արտադրութիւնը կառուցված է այլ հիմքի վրա՝ բավարարել սպառումը, բարելավել աշխատավոր մասնաների կյանքը և ե՛լ ավելի բնդարձակել սոցիալիստական արտադրութիւնը՝ աշխատավորների նյութական կյանքը բարելավելու համար, այս պատճառով մեզ մոտ չի սահմանափակված միջերջների արտադրութիւնը և սպառումը: Նրանց մոտ կան տասնյակ միլիոնավոր գործազուրկներ, իսկ մեզ մոտ գործազուրկ չկա: Չնայած մեզ մոտ ապրանքի արտադրութիւնն, ավելացել է, որինակ՝ ընթացիկ տարվա առաջին յետամսյակում արդյունաբերական արտադրութիւնն ավելացել է 31,1 տոկոսով՝ համեմատած անցյալ տարվա առաջին յետամսյակի հետ, այնուամենայնիւ մենք վոչ միայն աշխատանքային ուժի ավելացուկ չենք նկատում մեր ձեռնարկութիւններում, այլև, ընդհակառակը, մեր արդյունաբերութեան միջանի ճյուղեր այժմ ել աշխատանքային ուժի պակասութիւն են գդում:

Ահա սոցիալիզմի չորրորդ պայմանը, վորը լրիվ կատարված է մեզ մոտ բանվորների նյութական պայմանների արմատական բարելավման հետ միասին: Վերջիններ, որինակ, աշխատավարձը, վորը համեմատած 1928 թվականի հետ բարձրացել է ավելի քան 3 անգամ: Բանվորի տարեկան միջին աշխատավարձն այն ժամանակ կազմում էր 730 ռուբլի, իսկ այժմ,

1936 թվականին, կազմելու յե 2465 ոււրլի: (Ծափա-
հարություն):

Ընկերներ, սկսեք ե ասել, վոր դրա հետ միասին
արմատապես փոխվել ե նաև մեր խորհրդային յերի-
տասարդության գլուխներ: Կապիտալիզմի պայման-
ներում յերիտասարդությունը յենթակա յե ամենա-
ամարդի շահագործման ու նախ ե առաջ գործադրկու-
թյան ե կապիտալիզմի մյուս «հրաշալիքներին»: Կա-
պիտալիստական արտադրության մեջ յերիտասարդու-
թյան աշխատանքն ամենակեղծն աշխատանքն ե: Իսկ
մեր խորհրդային յերիտասարդությունը նյութական
պայմանների տեսակետից վոչ միայն չի տարբերվում
արտադրության մեջ բանվորների ու կոլտնտեսական-
ների մյուս մասայից, այլև զեռ ավելին՝ հաճախ ամենապատվավոր տեղերն ե գրավում ե պատասխա-
նատու մասնագիտությունները, ամենքից ավելի մեծ
նախաձեռնություն հանդես բերելով մեր սոցիալիստա-
կան շինարարության բոլոր ճակատամասերում:

Կատարված ե նաև սոցիալիզմի մի շատ կարևոր
պայմանն ել: Մեզ մոտ ամեն ինչ արված ե կոտջն
ազատագրելու ե նրան մեր ամբողջ սոցիալիստական
շինարարության իսկական ու իրավահավասար մասնա-
կիցը դարձնելու համար: Մեզ մոտ չկան աշխատանքի
ու զիտության այնպիսի ձյուղեր, վորտեղ կինն ամենաակտիվ
մասնակցություն չցուցաբերի:

Մեր բոլջևիճկյան կուսակցությունը հաջողությամբ
յուժեց նաև աղգային հարցը: Խորհրդային Միության
բոլոր ժողովուրդներն իրավահավասար են ե հավա-
սարահափ մասնակցում են նոր կյանքի շինարարու-
թյանը: Խորհրդային Միության յուրաքանչյուր, թե-

կույ ամենափոքր ազդութեան լեզուն, կուտուրան նպաստաւոր պայմաններէ մեջ են դրված իրենց գարգացման համար: Մեզ մոտ չկան Տնչվողներ և Տնչողներ: Այսպիսով սոցիալիզմի այդ պայմանն եւ լրիվ ու ամբողջովին իրագործված է: (Ծափահարութուն):

Այս ամբողջ վիթխարի աշխատանքն ամենավերջին շրջանում պսակվում է արդյունաբերութեան և գյուղատնտեսութեան մեջ տարածվող ստախանովյան շարժման հղոր թափով, վերը նոր սահմանն է անցկացնում մեր խորհրդային հասարակարգի և բուրժուական հասարակարգի միջև՝ աշխատանքի ավելի բարձր արտադրողականութեամբ, քան այդ կա կապիտալիստներէ մոտ, մեր յերկրի այդ նոր, ավելի փարթամ ծաղկման հիմքով: Ստախանովականները, տեխնիկային տիրապետած, սահմաններ չճանաչող, այդ սահմանները խորտակող մարդիկ ճանապարհ են հարթում սոցիալիստական հասարակութեան ավելի բարձր աստիճանին անցնելու համար: Յեւ այդ է, ընկերնէ՛ր, այն մեծազույն նշանակութեանը, վոր ունի ստախանովյան շարժումը:

Ահա այն արժատական փոփոխութեանները, վոր կատարվել են մեր մեծ յերկրում:

Այսպիսով, հեղափոխութեան հանդեպ նվազողներէ, ապա նաև նրա ուղղակի թշնամիներէ՝ Տրոցկու, Չիւնովյիւի, Կամենեվի ու մյուսների այն բոլոր պնդումները, թէ մի յերկրում չի կարելի սոցիալիզմ կառուցել—մնացին իրրև մի խղճուկ վնդսոոց: (Ծափահարութուն): ԽՍՀՄ-ում սոցիալիստական հասարակարգը ստեղծված է: Խորհրդային Միութեանն ամբողջու է, ուժեղ, նրա սահմանները պաշտպանում է մեր

քաջարի Կարմիր բանակը : (Ծափահարություն) :
ԽՍՀՄ-ն սիրելի հայրենիք ե դարձել վոչ միայն իր
ժողովրդի համար, այլև դարձել ե այնպիսի յերկիր,
վորը սիրում են համայն աշխարհի աշխատավորները :
(Ծափահարություն) :

Այս բոլորին մենք հասանք մեր բուլչեկյան կու-
սակցության և նրա Կենտրոնական կոմիտեյի լենինյան
ճիշտ քաղաքականության շնորհիվ և մեր հարազատ ու
մեծ Ստալինի հանճարեղ ղեկավարությամբ : (Բուռն
ծափեր : Դահլիճը վռտֆի յե կանգնում : Բացականչու-
թյուններ՝ «Կեցցե՛ ընկեր Ստալինը», «Ընկեր Ստալի-
նին ուռա՛» : Ուկրաիններեն բացականչություն . «Կեցցե՛
մեծ Ստալինը, ուռա՛») :

Այսպես, ուրեմն, ընկերներ՛ր, մեզ մոտ ստեղծված
են բոլոր անհրաժեշտ պայմանները սոցիալիստական
արտադրության նոր վերելքի և հաղթանակների հա-
մար : Մենք ունենք խոշոր արդյունաբերություն,
այժմ մենք ունենք խոշոր սոցիալիստական գյուղա-
տնտեսություն . մենք ունենք հսկայական քանակու-
թյամբ ամեն տեսակ առաջնակարգ մեքենաներ, վորոնց
թիվն որեցոր գնալով ավերանալու յե մեր գործարան-
ներում և կոլտնտեսային դաշտերում :

Մեր մեծ յերկիրն ունի հսկայական քանակությամբ
ամեն տեսակ բնական հարստություններ, վորոնց
շնորհիվ նա անկախ ե դառնում մյուս յերկիրներից :
Մենք ցանկություն ունենք առաջ գնալու, մարտնչելու
նոր հաղթանակների համար, հավատ ունենք այդ հաղ-
թանակների նկատմամբ : Յեվ վերջապես այժմ մենք
ուսնենք նոր, հիանալի մարդիկ սոցիալիստական շինա-
բարության բոլոր ասպարեզներում :

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ԿՈՄՈՒՆԻՏՏԱԿԱՆ ԴԱՏՏԻԱՐԱԿՄԱՆ
ՅԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆ Ե

Ի՞նչ է պետք մեզ այժմ : Մեզ հարկավոր են, ընկերներ, ուսում, գիտություն, վերսինական միայն գիտությունն է վորոշելու գործը իրար ասպարիզներում : Յես արդեն ասացի, վոր մեզ մոտ՝ ԽՍՀՄ-ում արտադրական ուժերը վրջնչով չեն սահմանափակված : Արտադրությունը բոլոր կապանքները վերացված են : Միմիայն գիտելիքների պակասությունը, կիսադրագիտությունը և ճահճացումը կարող են խոչընդոտ հանդիսանալ մեր գործին : Անդրագիտություն և կիսագրագիտության վերացումը, ավելի լավ ուսուցումը դպրոցներում, բանվորների ու կոլանտեսականների տեխնիկական կրթության բարձրացումը կվրջնչացնեն այդ վերջին խոչընդոտը, վորպեսզի ավելի վիթխարի հաղթանակներ ձեռք բերվեն կոմունիստական հասարակության կառուցման գործում : Ահա, ընկերներ, թե վորտեղից է բղխում այն հատուկ ուշադրությունը, վոր նվիրում է կրթության հարցերին մեր բուշեիկյան կուսակցության կենտկոմը և անձամբ ընկեր Ստալինը : (Ծափահարություն) : Ահա՛ թե ինչու ուսումը դառնում է լենինյան կոմյերիտմիություն կենտրոնական խնդիրը : Կոմյերիտմիությունն ամբողջ խորհրդային յերիտասարդության ուսուցման կազմակերպիչն է : Ի՞նչպիսի տեաման մտախն է խոսքը : Այդ հարցին մենք միայն այսպես պետք է պատասխանենք. այժմ՝ մեզ համար կարևոր է ամեն տեսակ ուսում գիտությունների բոլոր ճյուղերում, ակաճ ան-

գրագիտութեան ու կիսագրագիտութեան վերացումից մինչև գիտահետազոտական ուսումը :

Ինչպես դուք գիտեք, խորհրդային իշխանութիւնը և մեր կուսակցութեանն արդէն քիչ բան չեն արել մեր յերկրում կուլտուրայի և կրթութեան զարգացման ասպարեկներում : Կարելի չե իրըն ուրինակ վերցնել մի բանի թիւ, հասկանալու համար, թե կուլտուրական ինչպիսի հակայական աշխատանք ե կատարվել ԽՍՀՄ-ում, անցած ժամանակաշրջանում : Տարրական և միջնակարգ դպրոցների աշակերտների թիւը հեղափոխութեանից առաջ՝ 1914 թվականին, կազմում եր 7·800·000 հոգի, իսկ 1936 թվականին տարրական ու միջնակարգ դպրոցների աշակերտների թիւը կազմում ե 27·935·900 հոգի (ժամանակաշրջան), այսինքն՝ համարյա չորս անգամ ավելի : Այդ նշանակում ե, վոր մենք հասանք յերեխաների դիտումին ընդգրկմանը մեր դպրոցներում : Բացի դրանից տեխնիկումների աշակերտների թիւը համապատասխանորեն կազմում եր մոտ 48 հազար հոգի, իսկ այժմ՝ 740 հազար հոգի : Տեխնիկական և ընդհանուր բարձրագույն ուսումնական հաստատութեաններում կար 124 հազար հոգի, այժմ՝ 509 հազար հոգի : Դրանով բնավ չեն սպառվում ուսուցման այն բոլոր տեսակները, վոր ունենք մենք մեր յերկրում : Մեծ թիւով մարդիկ սովորում են նաև Փարզործուաներում, հասակավորների գործարանային դպրոցներում, կուլտնտեսային դպրոցներում, գյուղատնտեսութեան համար դանազան կադրեր պատրաստող դասընթացներում և այլն :

Անգրագիտութեան վերացման ասպարեկում մենք մեծ հաջողութեաններ ունենք : Հեղափոխութեանից

առաջ մեզ մոտ Տից մինչև 50 տարեկան բնակիչները
70 տոկոսն անդրադեռ եր, իսկ այժմ այդ հասակն ու-
նեցող անդրադեռների թիվը կազմում է մոտ 8—10
տոկոս: Կատարված ամբողջ կուլտուրական աշխա-
տանքի շնորհիվ յերկիրը դուրս հանվեց տգիտութեան
ու խաւարի ծովից, սակայն այդ դեռ քիչ է: Այժմ
մեզ քիչ է հետաքրքրում ուսումնական հաստատու-
թյունների թիվը, բացի տարրական ու միջնակարգ
դպրոցներից, վորոնք մենք շարունակելու յենք կառու-
ցել ուժեղ թախով: Իսկ տեխնիկումների և բարձրա-
դույն ուսումնական հաստատությունների ու այլ դըպ-
րոցների թիվը մեզ մոտ արդեն քիչ չէ: Այժմ մեզ հե-
տաքրքրում է գլխավորապես ուսուցման միջակը, նրա
կազմակերպումն ու վորակը: Պետք է խոստովանենք,
վոր, չնայած ձեռք առնված միջոցներին ու այն մեծ
աշխատանքին, վոր կատարվեց դպրոցում գործի դըը-
վածքը բարելավելու համար, սկսած տարրականից
մինչև բարձրագույն դպրոցը, մեր դպրոցի բոլոր
ողակներումն էլ դրությունը դեռ անբավարար է,
մանավանդ այնպիսի կարեւոր առարկաների նկատ-
մամբ, ինչպիսիք են մայրենի լեզուն, պատմությունը
և աշխարհագրությունը: Կարիք չկա բազմաթիվ որի-
նակներ բերելու ձեզ այդ ասպարեղից, յերբ դպրոցն
աւարտող յերեխաները և բարձրագույն ուսումնական
հաստատությունն ավարտող ուսանողները լավ չգիտեն
պատմությունը, չեն կարողանում գրագետ դրել, չեն
կարողանում հաշիւներ անել՝ չտիրապետելով մաթե-
մատիկական անհրաժեշտ գիտելիքներին:

Վորտեղից են առաջ դալիս այս թերությունները:
Անշուշտ, մինչև այժմ էլ դեռ վատ դատավանդումից,

դասագրքերի վատ վորակից և նրանից, վոր դպրոց-
ների ուսուցիչները զգալի մասը դեռ ինքն ել բավա-
կանաչափ զրադեա չե: Միայն մի քանի թիվ կրերեմ
մեր ուսուցիչները անբավարար դրագիտությունը և
նրանց կրթության ցածր մակարդակը ցույց տալու
համար:

ՌՍՖՍՀ տարրական դպրոցներում 1935 թվականին
ուսուցիչները 34,8 տոկոսը տարրական կրթություն
ունեն, 63,7 տոկոսը՝ միջնակարգ կրթություն և մի-
այն 1,5 տոկոսը՝ բարձրագույն մանկավարժական
կրթություն: Թերի միջնակարգ և միջնակարգ դպրոց-
ներում ուսուցիչները 9 տոկոսն ունեն տարրական
կրթություն, 66 տոկոսը՝ միջնակարգ կրթություն և
միայն 24 տոկոսը՝ բարձրագույն կրթություն: Ահա թե
ինչու ուսուցիչների կրթության անբավարար մակար-
դակը դպրոցի ամենաթույլ ճակատամասն է կազմում:

Պետք է, ընկերներ, խոստովանել, վոր դպրոցի
գրությունն առայժմ դեռ բացահայտորեն անբավարար
է: Համկ(բ)Կ Կենտկոմը և մանավանդ անձամբ ընկեր
Ստալինը յեռանդուն լծվել են աշխատանքի այդ ճա-
կատամասին: Պարզ է, վոր մենք անպայման կուզեմք
այն: Բայց դրա համար հարկավոր է շատ լրջորեն աշ-
խատել:

Այդ ասպարեզում կոմյերիտմիության դերը հակա-
յական կլինի, բայց առայժմ պետք է բացելիքաց ա-
ռել, վոր կոմյերիտական կազմակերպությունները
ինչպես հարկն է չեն լծվել այդ դործին և դեռես
պաույտ են դալիս դպրոցի շուրջը:

Ուսուցչության նկատմամբ պարզորոշ կերպով
յուրջ հոգատարությունն արտահայտվեց Կենտկոմի և

A 8337
3289 187



Ժողկոմխորհի վերջին վորոշումներում: Մենք պետք է սկսենք յուրաքանչյուր առանձին ուսուցչից, ողնենք նրան բարձրանալու կուրսուրականության ու զբաղիտության ավելի բարձր մակարդակին, ողնենք նրան ավելի բարձր վորակ ստանալու, վորպեսզի նա կարողանա իրոք լավ ուսուցիչ դառնալ:

Պետք է նկատի ունենալ, վոր մեզ մոտ ուսուցչիներին կեսը կոմյերխտական հասակ ունի, ուստի և կոմյերխտիստությունը կարող է հակայական աշխատանք կատարել: Խոսքը միայն տարրական ու միջնակարգ դպրոցներին չի վերաբերում, հարկավոր է լրջորեն լծվել գործի բարելավման աշխատանքին նաև մեր բարձրագույն դպրոցներում, մանավանդ մանկավարժական դպրոցներում, վորոնք ուսուցչիչներին կադրեր են պատրաստում մեզ համար, բայց վորոնք մինչև այժմ ել դեռ շատ վատ հիմքի վրա յեն դրված: Հարկավոր է, վոր կոմյերխտիստությունը լրջորեն դրադի մանկավարժական ինստիտուտներն ու տեխնիկումներն առաջավոր կոմյերխտականներով ու կոմյերխտահիներով համալրելու գործով, ինչպես անում է այդ մի քանի մյուս ուսումնական հաստատությունների նկատմամբ:

Պետք է շատ լուրջ գործ համարել նաև անդրագիտության ու կիսադրագիտության վերացումը մեր յերկրում: Դա մի ծանր քար է, վոր խանգարում է մեզ ուժեղ թափով առաջ գնալու: Մենք դեռ մի քանի միլիոն անդրագետ ունենք:

ՍՍՀՄ Ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վորոշմամբ մենք պետք է յերկու տարում վերացնենք մեր մինչև 50 տարեկան սոցաբնակության անդրագի-

տությունը: Բայց դեռ քիչ է վերացնել անգրագիտու-
թյունը, մեզ հարկավոր է վերացնել նաև կիսագրագի-
տությունը, պետք է նկատի ունենալ, վոր կիսագրա-
գիտությունը գոյություն ունի վոչ միայն մեծերի,
հասակավոր մարդկանց մեջ, այլև յերիտասարդու-
թյան մեջ:

Յեա կարող էլի բերել միայն մի որինակ: Կոմյե-
րիտոթյան Մոսկվայի կոնֆերենցիայում Ռյաժսկիյ
չըջանից հանդես յեկավ մի ընկեր և հայտարարեց հե-
տևյալը.

«Յեա պետք է հասն, վոր մեզ մտ, յերիտասար-
դության մեջ, կա 8,5 տոկոս անգրագետ և 32 տոկոս
կիսագրագետ: Դա տղաների մեջ, իսկ աղջիկների մեջ
տոկոսն ավելի բարձր է: Վերցրե՛ք մեր կոլտնտեսու-
թյունները. «Նովոյե վալդայեվո» և «Կրամնիյ Ոկ-
տյաբը» խոշոր կոլտնտեսություններում 700 յերիտու-
սարդից 314 հոգին կիսագրագետ է և 115 հոգին ան-
գրագետ»:

Այդպես է դրությունը Մոսկվայի գյուղական շրջան-
ներից մեկում, բայց արդյո՞ք Ռյաժսկիյ շրջանը բա-
ցատություն է կազմում: Բնավ վո՛չ, ընկերնե՛ր: Ըստ
յերևութին մորոչ տեղերում նույնիսկ ավելի վատ է,
այնինչ, կոմյերիտական աշխատողների մեջ մորոչ
տրամադրություններ կան անգրագիտության և կիսա-
գրագիտության վրայից թռիչք գործելու, այն փաս-
տարկումով, թե՛ ի՞նչ կարիք կա գլուխ ցավացնել
յերիտասարդության անգրագիտության և կիսագրա-
գիտության վրա, յեկեք միջնակարգ և բարձրագույն
կրթությամբ զբաղվենք:

Վո՛չ, ընկերնե՛ր, դա շատ սխալ դիրք է: Մենք ան-

պայման պետք է վերացնենք անգրադիտությունը և կրատգրադիտությունը՝ ագիտության և անկուլտուրականութեան այդ հիմքը, և այն ժամանակ մենք շատ ավելի արագորեն առաջ կընթանանք:

Յես արդեն խոսեցի դպրոցական ուսուցման մասին, բայց մեզ, ընկերներ՝, կարևոր է վոչ միայն տարրական, միջնակարգ ու բարձրագույն դպրոցների ուսուցումը, այլև արտագաղտոցական ուսուցումը: Ուսուցումն ավելի լայն հասկացողությունն է, իսկ մեզ մոտ ամբողջ ուսուցումը կոմունիստական ուսուցում է, վորովհետև առանց դրա չի կարելի կոմունիզմ կառուցել:

Հայտնի չէ, վոր բոլորը չեն կարող գիտություն ստանալ դպրոցի միջոցով, մանավանդ գյուղում: Ընդհանուր և տեխնիկական կրթութեան լուրջ միջոց կարող է ծառայել նաև հեռակա ուսուցումը, վորը բավականաչափ չի ծախարվել մեզ մոտ, բայց վորը պետք է հսկայական թափ ստանա, վորպեսզի ողնենք մարդկանց գիտելիքներ ստանալու առանց արտագրությունից կտրվելու: Այդ գործում կոմյերիտմիությունը պետք է հանդես դա վորպես ակտիվ կազմակերպիչ, աշխատելով հանդերձ դպրոցներում ու խմբակներում, գործարաններում ու կոլտնտեսություններում, առանց արտագրությունից կտրվելու՝ ուսուցումը ընդարձակելու և բարելավելու համար: Չի կարելի ճիշտ համարել յերիտասարդութեան վորոշ մասի մեջ գոյություն ունեցող և յերեխաների մեջ լայնորեն տարածված՝ անպայման ինժեներ կամ ողաչու դառնալու տրամագրությունը: Կոմյերիտմիությունը յերեխաների ու յերիտասարդների գիտակցութեան մեջ պետք է արմա-

տացնի, վոր մեր հասարակարգում հալատարապետ
կարևոր են բոլոր մասնագիտությունները՝ ուսուցչի,
փականագործի, խառատի, մեքենավարի, տրակտոր-
իստի, անասնաբուծի և այլ մասնագիտությունները:
Յուրաքանչյուր պատանի ու աղջիկ պետք է ձգտի կա-
տարելիքակես տիրապետելու վորևէ մասնագիտության:

Միքանի խոսք քաղաքական դատտիրակության
մասին: Աշխատանքի վերակառուցմանը վերաբերող՝
ընկեր Ստալինի հայտնի ցուցումներից հետո կոմյու-
նիստիությունը քիչ աշխատանք չի կատարել այդ աս-
պարեզում: Սակայն պետք է խոստովանել, վոր դեռ
դոյություն ունեն շատ լուրջ թերություններ, վորոնք
խանդարում են յերիտասարդության կոմունիստական
դատտիրակության գործին: Կոմյունիստիությանը
տրվող լենինյան դատտիրակությունը պետք է պատ-
րաստի իսկական բուշեիկներ, կոմյունիստականների մեջ
դատտիրակի բարձր դադափարականություն:

Այդ դատտիրակությունն անհրաժեշտ է յուրաքան-
չյուր կոմյունիստականի, վորպետեղի նա ավելի իրիդա-
խորեն ու վստահ կերպով առաջ գնա և լմբունի շրջա-
պատող իրադրությունը, լինի դա տնտեսություն, թե
իդեոլոգիա: Ընդհատ է, վոր մեզ մոտ չահագործող դա-
սակարգերը վոչնչացված են, սակայն այդ դասակար-
գերի մնացորդները դեռ կան: Նրանք յերբեմն թա-
փանցում են մեր խորհրդային որգանիղմի ամենա-
պատասխանատու և զգայուն տեղեր՝ կատարելով ի-
րենց վրասարար աշխատանքը: Այդ տեղի յե ունենում
նրանից, վոր չկա քաղաքական բավականաչափ սրու-
թյուն և զգաստություն ընդդեմ դասակարգային թրջ-
նամինների թափանցման՝ մեր կազմակերպություններ-

րի մեջ: Այդ թույլ չտալու համար պետք է քաղաքա-
կանապես դարձնու լինել:

Ահա թե ինչու մեր յերիտասարդութեանն անհրա-
ժեշտ է լենինյան-ստալինյան կոփիւածութիւնն տալ,
լավ կազմակերպելով քաղաքական դաստիարակութեա-
նը:

Քաղաքական դաստիարակութեան ասպարեզում կոմ-
յերիտմիութեան կատարած աշխատանքի թերութիւն-
ների մասին քանիցս խոսել է: Հիմնականում դրանք
հանդուժ են այն բանին, վոր քաղուսուցումը և կու-
սակցութեան / պատմութեան ուսումնասիրումը հաճախ
մակերեսորեն և դրվում, պրոպագանդիստներն ընտրը-
վում են անուշադիր կերպով, իսկ վոր գլխավորն է՝
կոմյերիտական կազմակերպութիւնները պրոպագան-
դիստների հետ չեն աշխատում: Գպրոցների ու խում-
բակների հաճախումն անբախտաբար և, դպրոցներում ու
խմբակներում պարտովմունքները հաճախ հետաքրքիր
չեն ընթանում, չեն զրափում յերիտասարդութեանը:
Մինչդեռ պետք է ասել, վոր կուսակցութեան պատ-
մութեան ուսումնասիրման թեման և այն ամենը, ինչ
կարգւած է դրա հետ, լենինի և Ստալինի աշխատու-
թիւնների ուսումնասիրումը, ամենաճոխ ու ամենա-
հետաքրքիր թեման է:

Սակայն զգրոցներում ու խմբակներում դաս-
մանդման աշխատանքը հաճախ այնքան անհետաքրքիր
է կատարւում, վոր կոմյերիտականներին ուղղակի
խորթացնում է քաղաքական-դաստիարակչական աշ-
խատանքից:

Այդ տեղի յի ունենում այն պատճառով, վոր այդ
աշխատանքում պատշաճ դեկամպրութիւն չի ապա-

հովված : Այժմ բանն աշխատանքը դործնականորեն կազմակերպելն է, վոչ թե բանաձևերն ու վորոշումները, այլ դպրոցների ու խմբակների ծրագրերը, և այն, վոր տանք լավ դասագրքեր, ընտրենք լավ պրոպագանդիստներ, վոր կոմյերխոմխության ղեկավար աշխատողներն անձամբ ստուգեն դպրոցների ու խմբակների աշխատանքը և անձամբ աշխատանք կատարեն այդ դպրոցներում ու խմբակներում, վորպեսզի նյութ հավաքեն գոյություն ունեցող թերություններն ուղղելու համար :

Ձեռնամուխ յեղեք, ընկերներ՛ր, այդ գործին, ինչպես հարկն է, պատշաճ բարձրության վրա դրեք քաղաքական-դաստիարակչական աշխատանքը կոմյերխոմխության մեջ :

Լենինը և ընկեր Ստալինը քանիցս կոմյերխոմխության առջև են դրել դաստիարակչական աշխատանքի հարցերը : Մի տարի առաջ ընկեր Ստալինն առանձնահատուկ լրջությամբ դրեց լենինյան կոմյերխոմխության ամբողջ աշխատանքն այդ տեսանկյունով վերակառուցելու հարցը : Սակայն պետք է ասել, վոր կոմյերխուական կազմակերպությունների ապարտոր դեռ հեռու յե այդ ուղղությամբ վերակառուցված լինելուց : Ուսման և դաստիարակության հարցերը դեռ կենտրոնական հարցեր չեն դարձել կոմյերխուական կազմակերպությունների աշխատանքում : Շատ կոմյերխուական աշխատողներ, դեռ անտեսելով այդ հիմնական խնդիրը, ցրվում են տնտեսական ու խորհրդային աշխատանքի գանազան ճակատամտերում :

Յերբ կոմյերխոմխության համադռնմարից առաջ քննարկվում էր, թե ինչպիսի հարցեր պետք է դնել

Համագումարում, և ինչ տեսանկյունով անցկացնել
 Համագումարի աշխատանքը, ընկեր Ստալինն ուղղակի
 ասաց, վոր նրա վարժիքով կոմյերիտմիության Համա-
 գումարը պետք է անցնի ուսման ու դաստիարակու-
 թյան կադմակերպման նշանադրանով: (Բուռն, յերկար
 ժամանակ չլուռ ծափահարություն): Այդպես էլ, ըն-
 կերնե՛ր, պետք է անել, ինչպես խորհուրդ տվեց ընկեր
 Ստալինը: (Բուռն ծափահարություն): Կոմյերիտական
 աշխատանքի ամբողջ պաթոսը և մեր ընդհանր կոմյու-
 րիտմիության վողջ հերոսիկան այժմ պետք է փոխա-
 դրել ուսման վրա: Այդ է գլխավորը: (Բուռն ծափա-
 հարություն):

ՍՏԱԽԱՆՈՎՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՅԵՎ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Ուղղակի ուսուցման հետ և վաւրված նաև ստախա-
 նովյան շարժման հետագա ծախսումը:

Ի՞նչ ունենք մենք այժմ ստախանովյան շարժման
 զարգացման ասպարեզում: Այտեղ, Կրեմլում տեղի
 ունեցած ստախանովականների հայտնի խորհրդակե-
 ցությունից հետո, ընկեր Ստալինի ճառից հետո և
 Կենտկոմի պլենումի վորոշումներից հետո ստախա-
 նովյան շարժումն այլևի ստաջ գնաց: 1936 թվականի
 առաջին յետամոյսակում արգյունարերությունը կա-
 տարեց իր պլանը, իսկ յերկաթուղային տրանսպորտի
 գծով պլանը նույնիսկ դերակատարվեց:

Սա, ընկերնե՛ր, ստախանովյան շարժման լուրջ
 հաղթանակն է, քանի վոր, ինչպես դուք գիտեք, մեր
 առաջին յետամոյսակի պլանը բարձր եր և սովորական
 պայմաններում նա չէր կարող կատարվել: Պլանը կա-

տարիւնց միայն շնորհիւլ այն բանի, վոր ստախանով-
յան շարժումը մեզ մտ առաջ դնաց :

Սակայն, ստախանովյան շարժումը ծախուլվում է
խայտարդեա կերպով : Արդյունաբերութեան մի շարք
ճյուղեր շարունակում են հետ մնալ : Հետ են մնում
այնպիսի կարևոր ճյուղեր, ինչպես անտառային ար-
դյունաբերութեանը, շինանյութերի արտադրութեանը,
ինչպես պղնձի արդյունաբերութեանը և այլն : Յեթն
արդյունաբերութեան այդ ճյուղերը հետ չմնային, մենք
ամենայն հավանականութեամբ կգերակատարելինք ա-
ռաջին յետամսյակի պլանը : Բայց նույնիսկ առջևից
ընթացող ձեռնարկութեաններում ու արդյունաբերու-
թեան ճյուղերումն էլ ստախանովականների թիւը հիմ-
նական ցիխերում բոլոր աշխատողների մեկ յերրորդ
մասն է կարգում, իսկ ոժանդակ ցիխերում՝ նույնիսկ
ե՛լ ավելի պակաս :

Նոր նորմաների կիրառման և աշխատավարձի վե-
րակառուցման աշխատանքն արդյունաբերութեան մի
շարք ճյուղերում չափից դուրս ձգձգվեց : Այսպիսով
կարելի չէ ստել, վոր ստախանովյան շարժումը դեռ
միայն իր սկզբումն է գտնվում : Մենք ստախանովյան
շարժման ծախուման դործում ինքնահոսի անթույլա-
տելի և վնասակար արամադրութեաններ ունենք արն-
տեսավարների և վոչ միայն անտեսավարների, այլև
կուտակցական, կոմյերիտական և պրոֆսիութեանական
կազմակերպութեանների աշխատողների վորոշ մասի
մեջ, և միայն դրանով կարելի չէ բացատրել այն, վոր
մեր անտեսութեան մի ամբողջ շարք ձեռնարկութեան-
ներում ու ճյուղերում այժմ ստախանովյան շարժումն

ալիկի վատ վիճակում և դտնվում, քան ղեկտեմբեր
ամսին:

Ստախանովյան շարժումը պահանջում և արտա-
դրության կառավարման ամբողջ մեխանիզմի աչխա-
տանքի նորոգում: Նա չի հանդուրժում վոչ մի ճահճա-
ցում, բյուրոկրատիզմ ու անշարժություն, ուստի և
այդ շարժումը սարսուռի յեն յենթարկում, նրան ղի-
մադրություն են ցույց տալիս մեր տնտեսության կա-
ռավարման սխառեմում յեղած այն մարդիկ, ովքեր այդ
թերությունները կրողներն են հաղիսանում: Կոմյե-
րիտմիությունը պետք և ամեն կերպ ողնի կուսակցու-
թյանը՝ ջախջախելու այդ սարսուռին ու ընդդիմա-
դրությունը և է՛լ ալիկի ծախալելու ստախանովյան
շարժումը: Ծատ տնտեսավարներ դտնում են, վոր ա-
ռաջադրված ծրագրի կատարումն ստախանովյան աչ-
խտանքի սահմանն է: Յերբե՛ք: Ստախանովյան շարժ-
ման ծախալումը պետք և առաջ անցնի նշված արտա-
դրական ծրագրից: Այս և խնդիրը:

Բայց առանձնապես պետք է ընդդժել տեխնիկական
ուսուցման նշանակությունն ստախանովյան շարժման
հաջող ծախալման համար: Բանվորների հսկայական
մեծամասնությունը մեզ մոտ այժմ ստախանովյան
դառնալու ցանկություն ունի: Ստախանովյան դառ-
նալու ճանապարհը ցույց են տվել մեր լախագույն
ստախանովյանները: Բանն այժմ այն է, վոր լաչնո-
րեն ծախալի տեխնիկական ուսուցումը, վորը մեզ
մոտ՝ ձեռնարկություններում դեռ անբախարար հիմ-
քերի վրա յե դրված և հաճախ կազմակերպված է
ձեռնարկներն: Կոմյերիտմիությունը պետք է լծվի այդ

գործին ինչպես հարկն և և իր յեռանդը յերևան բերի
այդ ուղղությամբ:

Բայց կոմ յերիտմիությունն առանձնապես վճռական
զեր պետք և խաղա ստախանովյան շարժումը գյուղա-
տնտեսության մեջ ծախալելու գործում: Ընկեր Ստա-
լինը կուսակցության և ամբողջ յերկրի առաջ խնդիր
դրեց՝ մոտակա 3—4 տարվա ընթացքում հացահատիկի
արտադրությունը հասցնել մինչև 7—8 միլիարդ փթի:
Այդ խնդիրը մենք կկատարենք, յեթև մեր գյուղատնտե-
սեսության մեջ, ինչպես հարկն և, ծախալենք ստա-
խանովյան շարժումը: Իսկ պետք և խոստովանել, վոր
ստախանովյան շարժումը կոլտնտեսություններում մեզ
մոտ դեռ միայն նոր և սկսվում, բայց նա արագորեն
ու լայնորեն ծախալվելու բոլոր հիմքերն ունի: Մեքե-
նաներ մենք ունենք, դրանց թիվը տարեց-տարի աճե-
լի ու աճելի կչատանա, սպարարտանյութերի քանակու-
թյունը կաճելանա, կոլտնտեսությունները վերջնակա-
նապես ձևավորվել են: Կոլտնտեսային ստալինյան կա-
նոնադրությամբ գտնվեց պետության և առանձին կոլ-
տնտեսականի չահերը գուգակցելու լավագույն ձևը:
Մշակվեցին մարդկանց նոր կադրեր ի դեմս կոմբայ-
նավարների, արակտորիտների, անասնաբույժների և
այլն: Գյուղատնտեսության մեջ յեղած ներկայիս ստա-
խանովականները — դրանք, իհարկե, առաջմ միայն
հետախույզներ են, վորոնք հիանալի կատարեցին ի-
րենց խնդիրը և ցույց տվին ճանապարհը: Ստախա-
նովյան շարժման արդյունքները գյուղատնտեսության
մեջ, ընկերներ, հսկայական կլինեն: Դժվար և նույն-
իսկ սպառնալից են, թե ինչպիսի թոխչք կկատարենք
մենք այն հետամնացությունից, վոր գոյություն ունի

դյուղատնտեսութեան մեջ, յեթե գործնականում իրականացնենք այն, ինչ տալիս են իրենց աշխատանքի արդյունքով դյուղատնտեսութեան աշխարհի առաջավոր մարդիկ, ինչպէս Անդելիան, Դեմէնկոն և մի շարք ուրիշները: (Ծափահարութիւն):

Բայց ստախանովեան շարժումը գյուղատնտեսութեան մեջ ինքնահոսով չի ընթանա: Դրա համար պահանջում են հսկայական կադմակերպչական աշխատանք և այդ գործում առանձին դեր պիտի խաղա կոմյերիտմիութեանը, քանի վոր յերիտասարդութեան դերը գյուղատնտեսութեան մեջ ե՛լ ավելի նշանակալից է, քան արդյունաբերութեան մեջ, վորովհետև առավել առաջադիմականը, վորը կաշկանդված չե անհատական տնտեսութեան տրադիցիաներով, առավել համարձակն ու գրագետը գյուղատնտեսութեան մեջ կոլտնտեսային յերիտասարդութեանն է, և պետք է յենթադրել, վոր կոմյերիտմիութեանը պատվով կկատարի իր խնդիրն ու անձնփրարար կմարտնչի հանուն ընկեր Ստալինի առաջադրանքի կատարման՝ հացահատիկի արտադրութեանը մինչև 7—8 միլիարդ փթի հասցնելու, հանուն անտանարուծութեան արագ վերելքի, հանուն բամբակի, վուշի, բրդի և արդյունաբերութեան համար անհրաժեշտ այլ հումքի քանակի ավելացման: (Ծափահարութիւն):

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԱՐՅԵՐԸ

Թույլ տվեք ինձ այժմ մի փոքր կանդ առնել կոմյերիտմիութեան կադմակերպչական հարցերի վրա: Յեթե ձիշտն ասենք, ընկերներ, կոմյերիտմիութեան

կազմակերպական աշխատանքը լրջորեն հետ և մնում
մեր սոցիալիստական շինարարութեան բոլոր բնագա-
վառներում կոմյերիտմիութեան ունեցած խնդիրները
ու դերը մակարդակից, իսկ կազմակերպական աշխա-
տանքում այդպիսի հետամնացութեան չպետք և լինի :
Բանն այն է, վոր վերացնենք կազմակերպական աշխա-
տանքի այդ հետամնացութեանն այն խնդիրները մա-
կարդակից, վոր ունի կոմյերիտմիութեանը :

Ինչի՞ յե հանգում կոմյերիտմիութեան կազմակեր-
պական աշխատանքի վերակառուցումն ու բարելավու-
մը : Նախ՝ այն բանին, վոր կոմյերիտմիութեան ամ-
բողջ կազմակերպական աշխատանքը յենթարկվի հիմ-
նական խնդրին—այն է՝ դառնալ ամբողջ խորհրդա-
յին յերիտասարդութեան ուսուցման ու կոմունիստա-
կան դատտիրակութեան իսկապես լայն կազմակեր-
պութեան : Այդ կողմը պետք է շրջել, ընկերներ՝ ր, ամ-
բողջ կոմյերիտական ասպարատը, և շրջել ինչպես հար-
կըն է :

Յերկրորդ՝ կազմակերպական աշխատանքի բարելա-
վումն ու վերակառուցումը հանգում է այն բանին,
վոր դործնականում իրականացվի կոմյերիտմիութեան
նոր ծրագիրն ու նոր կանոնադրութեանը, վորը դուք
կընդունեք համադրումարում :

Ընկեր Ստալինը, վորի ղեկավարութեամբ մշակվե-
ցին կոմյերիտմիութեան նոր ծրագիրն ու կանոնադրու-
թեանը, չափազանց լուրջ ուղղումներ մտցրեց թե՛
ծրագրի և թե՛ կանոնադրութեան սկզբնական նախա-
դժերի մեջ : Բայց, ընկերներ՝ ր, պետք է ասեմ, վոր այդ
ուղղումները պարզապես ուղղումներ չեն ծրագրի ու
կանոնադրութեան նախադժերի մեջ, այլ լուրջ ուղ-

ղումներ կոմ. յերիտմիութեան նախընթաց ու գոյութիւն
ունեցող վողջ կազմակերպական աշխատանքում : Ի՞նչ
ուղղումներ են դրանք : Այդ ուղղումները չափազանց
չառ են : Յեւ կարծում եմ, վոր այն զեկուցողները,
վորոնք զեկուցելու յեն համադումարին ծրարելի ու
կանոնադրութեան մասին, կպատմեն այդ : Յեւ կանոն
կառնեմ միայն յերկու ուղղման վրա :

Կանոնադրութեան հին տեքստի յերրորդ պարբերու-
թեան սկզբում յեղած՝ «ՀամԼԿՅՅՄ-ն իր էյու-
թեամբ մաստայական-պրոլետարական կազմակերպու-
թիւն է, վորն իր շարքերում համախմբում է առաջա-
վոր, դասակարգայնորեն զիտակից, քաղաքականապէս
զբաղեալ յերիտասարդութեան լայն խափերին» փոխա-
րեն ընկ. Ստալինն առաջարկեց այլ տեքստ. «Համ.
ԼԿՅՅՄ-ը մաստայական անկուսակցական կազմակեր-
պութիւն է, վորն իր շարքերում համախմբում է քա-
ղաքի և գյուղի առաջավոր, քաղաքականապէս զբաղեալ
աշխատավոր յերիտասարդութեան լայն խափերին» : Այդ
նույն պարբերութեան յերկրորդ մասում, «ՀամԿ(ր)Կ
և ՀամԼԿՅՅՄ ծրարելից կատարվող ամեն մի շեղում
անհամատեղելի յե կոմ. յերիտմիութեան մեջ մնալու
հետ» ֆրագից ջնջված են «ՀամԿ(ր)Կ» բառերը : Յեր-
րորդ կետում հին տեքստի փոխարեն, վորտեղ խոս-
վում էր ՀամԼԿՅՅՄ անդամ ընդունելու ժամանակ
բոլոր սոցիալական հատկանիշի խմբերի բաժանելու
մասին, ընկեր Ստալինն առաջարկեց այլ տեքստ. «Կոմ-
յերիտմիութեան անդամ ընդունվում է առաջավոր,
ստուգված, խորհրդային իշխանութեանը նվիրված յե-
րիտասարդութիւնը՝ բանվորների, գյուղացիների և
ծառայողների միջից» :

Ի՞նչ են ցույց տալիս այս ուղղումները: Սրանք ցույց են տալիս, վոր կոմյերիտմիությունը պետք է վերջ դնի իրեն կուսակցական կազմակերպություններին լիովին համապատասխան ձևով կառուցելուն և իր ամբողջ աշխատանքում կուսակցական կոմիտեներին նմանվելուն: Մենք ունենք մեկ բոլջևիկյան կուսակցություն: Կոմյերիտմիությունը ՀամԿ(բ)Կ-ին հարող առաջավոր յերիտասարդության անկուսակցական կազմակերպություն է: Այդ նշանակում է, վոր կոմյերիտմիությունը պետք է դառնա ավելի լայն կազմակերպություն, քան նա հանդիսանում և այժմ: Կարիք չկա հորինելու ՀամԿՅՅՄ անդամ ընդունելու աշխարհի սահմանափակումներ, վորոնք նման լինեն կուսակցության մեջ ընդունելու սահմանափակումներին: Նոր ծրագրի ու կանոնադրության հետևանքով կոմյերիտական կազմակերպությունը պետք է աճի և դրա մեջ սարսափելի վոչինչ չկա: Այդ չի նշանակում լայն բաց անել դռները և ընդունել ում վոր պատահի: Դրա համար կա սահմանափակում, այսինքն՝ վորոչ քաղաքական պատրաստականություն և յուրաքանչյուրի ստուգումը՝ կոմյերիտմիության մեջ ընդունելուց առաջ: Այս յերաշխիքները պետք է իստորեն կատարվեն, բայց կարիք չկա կուսակցական կազմակերպություններին հատուկ սահմանափակումներ հորինել:

Ուղղումներն այնուհետև ցույց են տալիս, վոր կոմյերիտմիության մեջ պետք է վերացվի սոցիալական կազմի այսպես կոչված կարգավորման պրակտիկան: Պետք է վերացվեն զոյություն ունեցող բաժանումները: Մինչև այժմ կոմյերիտմիությունն իրեն համարում էր դերադանցապես պրոլետարական կազմակեր-

պություն, այժմ նա զանոնում ե ավելի լայն կազմակերպություն, խորհրդային ամբողջ առաջափոր յերիտասարդության — բանվորների, կոլտնտեսականների, ծառայողների և ուսանողների կազմակերպություն :

Ահա թե, ընկերներ՝ ինչ են բղխում ընկեր Ստալինի արած միայն այն յերկու ուղղումներից, վոր յես մեջ բերի այստեղ :

Յերրորդ՝ կոմյերիտմիության կազմակերպական աշխատանքի բարելավման խնդիրներն այն են, վոր վերացվեն դոյություն ունեցող թերությունները և ուժեղացվեն կոմյերիտական աշխատանքի այն բնագավառները, վորոնք այսոր դեռ թույլ բնագավառներ են հանդիսանում : Ի՞նչ թերություններ են դրանք : Առաջին լուրջ թերությունը, վորի մասին խոսում եյին կոմյերիտմիության՝ համագումարից առաջ անցկացված բարձրագույն կոնֆերենցիաներում, այդ այն թերությունն է, վորը հանդում ե կազմակերպական ղեկավարության թուլությանը՝ վերևից մինչև ներքև, վորն արտահայտվում ե այն բանում, վոր կազմակերպական ղեկավարության մեջ կոնկրետության փոխարեն հաճախ ղերակշռում ե ղերեկախիվերով, քաղաքական դրույթներով և ընդհանուր սոմամբ մասնացույց անելով ղեկավարելու թերությունները, և այն, վոր այդ թերությունները պետք ե ուղղել : Այսպիսի ղեկավարությունը, ընկերներ՝ այժմ չի կարող բավարարել մեղ : Նա պետք ե լինի ավելի կանկրետ, ավելի վորուչակի և նա պետք ե հետապնդի կոմյերիտական կազմերի՝ վերևից մինչև ներքև դաստիարակության իրնղելիները :

Դաստիարակման տարրերը կազմակերպական աշ-

խառանքում, համողելը և սովորեցնելը ձեզ մոտ պետք է շատ ավելի ուժեղ լինեն, քան կուսակցական կաղմակերպութիւններում, վորովհետև կուսակցութեան մեջ մենք ընդունում ենք ավելի հասունացած ու քաղաքական տեսակետից ավելի պատրաստված մարդկանց, մինչդեռ կոմյերիտմիութեան մեջ մենք դեռ հակադաս կան դատարարական աշխատանք ենք յենթադրում յուրաքանչյուր կոմյերիտականի նկատմամբ: Ահա թե ինչու կաղմակերպական աշխատանքի մեջ դատարարական և ուսուցման տարրերը ձեզ մոտ պետք է ավելի տարածված լինեն: Ձեզ մոտ պայքարը տուժեցրի առատութեան, կաղմակերպական աշխատանքի մեջ յեղած ֆորմալիզմի, դանդաղան հարցերն ախպես կոչված հարցման կարգով լուծելու և վարչաբարութեան դեմ պետք է լինի ավելի սուր, քան այժմ:

Այժմ արդեն քիչ է այն, վոր դու վորպես ղեկավար կամ հրահանգիչ մասնացույց ես անում թերութիւնները և դրանց ուղղման անհրաժեշտութիւնը: Վո՛չ, դու դրա հետ միասին պարտավոր ես նաև սովորեցնել, թե ինչպէս ուղղել այդ թերութիւնները: Անկանոնութիւնները յերևան բերելը — դա դեռ քիչ է ղեկավարի համար: Լավ է, վոր դու զգում ես թերութիւնները, բայց դու պարտավոր ես նաև սովորեցնել, թե ինչպէս ուղղել այդ թերութիւնները:

Յե՛վ վորքա՞ն բողոքներ կան ձեզ մոտ հրահանգիչների դեմ, առանձին ղեկավար աշխատողների շրջադասութիւնների դեմ, ստորին կաղմակերպութիւնների ու շարքային կոմյերիտականների կողմից: Կդա, ատում են, մի մարդ, կհայհոյի, կքննադատի, ձառեր կասի, կհալաքի ամեն տեսակի վիճակադրական տվյալ-

ներ ու կվերագանա. իսկ ոգնել զործին, սովորեցնել, թե ինչպես կարելի չե ավելի լավ կազմակերպել աշխատանքը — այդ բանը չկա :

Կա՞ արդյոք, ընկերներ՛ը, կոմյերիտական կազմակերպությունների մեջ այսպիսի սլրակախիկա :

ՁՍՅՆՆՐ. — Կա, կա :

ԱՆԴԻՆՅԵՎ. — Ի՞նչ են ցույց տալիս այս թերությունները: Դրանք մի կողմից ցույց են տալիս, վոր ղեկավար աշխատողների կողմից մակերեսային մոտեցում գոյություն ունի ղեպի կազմակերպական հարցերը, իսկ մյուս կողմից՝ այն, վոր այս կամ այն ղեկավարն ինքն ել ուրախ կլինի սովորեցնելու, թե ինչպես կարելի չե ավելի լավ կազմակերպել գործը, բայց չզիտե, թե ինչպես անել այդ: Այդ պատճառով ել հաճախ աշխատանքը բարեկազմու ձևը չիմանալը քողարկվում ե ընդհանուր խոսակցություններով, դիրեկտիվներով ու քաղաքական դրույթներով: Սա ցույց ե տալիս, վոր ղեկավար կոմյերիտական կազմերի վորոչ մասը հետ ե մնում կոմյերիտական հարաճուն աշխատանքի կենսական պահանջներին ու կարիքներին :

Կոմյերիտական ղեկավարությունը՝ ներքեից մինչև վերև, չպետք ե հետ մնա յերիտասարդության քաղաքական, կուլտուրական ու կազմակերպական աճումից: Խնդիրն այն ե, վոր ե՛լ ավելի համարձակորեն կոմյերիտական աշխատանքի ներգրայվեն նոր մարդիկ, ե ամբողջ ղեկավար ակտիվն ավելի յրջորեն սովորի, վորպեսզի լինի քաղաքականապես զբազեա, կուլտուրական ղեկավար: Ավելի քիչ նիստեր գումարեցեք: Շատ բողոքներ կան բազմաթիվ ու յերկարատե նիստերի վերաբերյալ: Շատ կոմյերիտական աշխատողներ ասում

են — այնքան շատ նիստեր ենք ունենում, վոր ժամանակ չի լինում աշխատելու և սովորելու: Ուրեմն, ընկերներ, ավելի քիչ նիստեր դումարել, ավելի քիչ ամեն տեսակի հանդիսավորութիւն, ավելի քիչ աղմուկ ու ճրճոսան խոսքեր: Ավելի շատ համեստութիւն ու լրջութիւն ձեր ամբողջ աշխատանքում ու վարքի մեջ: Ավելի քիչ բանաձևեր ու ընդհանուր դիրեկտիւններ գրեցեք: Ավելի յեռանդուն սրայքարեցեք անդրադիտութիւն դեմ, պարծենկոտութիւն ու մեծամտութիւն դեմ: Ավելի շատ սովորեցեք ու աշխատեցեք ձեզ վրա, այն ժամանակ կարճակերպական աշխատանքը ձեզ մոտ կհասնի հարկ յեղած բարձրութիւն:

Կոմյերիտմիութիւն թույլ ճակատամարը նրա կոլտնտեսային կազմակերպութիւններն են: Մեր յերկրում մենք ունենք 250 հազար կոլտնտեսութիւն, իսկ կոլտնտեսային Կոմյերիտական կազմակերպութիւններ՝ 102 հազար: Նշանակում է՝ կոլտնտեսութիւնների կեսից ավելին չունի կոմյերիտական կազմակերպութիւններ: Կոմյերիտականները կոլտնտեսութիւններում միայն 7 տոկոս են կազմում ամբողջ կոլտնտեսային յերիտասարդութիւն համեմատութիւնով: Սա քիչ է, ընկերներ: Սա ցույց է տալիս, վոր կոմյերիտմիութիւնը իր ազդեցութիւնը դեռ բավարար չտրիվ չի տարածել կոլտնտեսութիւններում: Իսկ յեթե դրան ավելացնենք, վոր կոմյերիտական կազմակերպութիւնների աշխատանքը կոլտնտեսութիւններում, իբրև կանոն, ավելի թույլ է, քան քաղաքում և արդյունարերական ձեռնարկութիւններում, ապա կոմյերիտական աշխատանքի այդ բնադաստը պետք է համարել թույլ բնադաստ:

Պետք է գործն այնպես առաջ տանել, վոր կոմյերիտական կազմակերպութեանները լինեն մեր կոլտնտեսութեանները համեմայն դեպս մեծ մասում և կոլտնտեսային յերիտասարդութեան մեջ աճի կոմյերիտական յերիտասարդութեան շերտը :

Մատակա 3—4 տարում 7—8 միլիարդ վութ հացահատիկ տալու, անասնարուծութեան վերելքն արագացնելու խնդիրը պահանջում է, վոր կուսակցութեան ու կոմյերիտմիութեան աշխատանքն զգացվի յուրաքանչյուր կոլտնտեսութեանում :

Բազաքի և գյուղի միջև յեղած տարբերութեան վերացումը հսկայական կուլտուրական աշխատանք է պահանջում : Կոլտնտեսականն այժմ ցանկանում է քաղաքացու նման ապրել ամեն տեսակետից . նա ցանկանում է ունենալ վրինո, ոսդիո, յերաժշտութեան, գրքեր, թերթեր և այլն : Կոլտնտեսականները ցանկանում են սովորել, մի խոսքով՝ այժմ նրանք չեն ցանկանում հետ մնալ քաղաքից ու քաղաքի կյանքից :

Այդ առաջ եր, վոր կիսաքաղց ապրող, կալվածատիրոջ ու կուլակի կողմից ճնշվող գյուղացին ողիտի եր մորացութեան տալիս իր վիշտը : Այժմ վիշտ չկա և կյանքը դարձել է ավելի ուրախ, ավելի հրճավուց, ունեւոր կյանքը փաստ է դարձել և ողու սպառումը մեր յերկրում տարեց-տարի պակասում է : Այժմ սովորարն ավելի ու ավելի մեծ քանակութեամբ ծախսվում է զանազան տեսակի տեխնիկական կարիքները համար :

Կոմյերիտմիութեան առաջ կանգած է կոլտնտեսային յերիտասարդութեան հսկայական մասսաների կոմունիստական դաստիարակութեան խնդիրը, 15—26 տարեկան հասակի յերիտասարդութեան, վորը հաս-

նում և վոչ ավելի, վոչ սրակաս, քան 28 միլիոն հոգու :
Նրան հարկավոր և վերադաստիարակել :

Ուրեմն, ընկերնե՛ր, ամուր ձեռնամուխ յեղեք կոմիտե-
րիտական աշխատանքի այդ հեա մնացող բնագավա-
ռին և լրջորեն ուղղեցեք այն :

Կոմիտեիտական աշխատանքի մյուս թույլ ողակը
կոմիտեիտիութեան աշխատանքն և այն յերիտապար-
զութեան մեջ, վորը դեռ չի մտել կոմիտեիտիութեան,
իսկ այդ յերիտասարգութեանը հսկայական մեծամաս-
նութեան և կազմում : Յեթե կոմիտեիտիութեանն առ
1-ն հունվարի 1936 թվականի իր շարքերում ունեիր 3
միլ. 623 հազար հոգի, ապա կոմիտեիտական հասակի
ամբողջ յերիտասարգութեան թիվը քաղաքում և գյու-
ղում հասնում և 37 միլ. 500 հազար հոգու, մինչդեռ
կոմիտեիտական կազմակերպութեաննեքի զգալի մասում
գոյութեան ունի վորոշ պարփակվածութեան և ձրգ-
տում՝ մեկուսանալու այսպես կոչված անկազմակերպ
յերիտասարգութեան մնացած ամբողջ մասսայից :

Սա սխալ և, ընկերնե՛ր : Չպետք և թույլ տալ, վոր
ջնջվի ամեն մի սահման կոմիտեիտականների ու մնա-
ցած յերիտասարգութեան միջև, չպետք և կորցնել յե-
րիտասարգութեան ավանդարդի դեմքը, բայց միաժա-
մանակ չպետք և նաև պարփակվել և կտրվել մնացած
մասսայից : Այս իմաստով ել հենց պետք և վերակա-
ռուցվի կոմիտեիտիութեան և առանձնապես նրա
սկզբնական կազմակերպութեաննեքի կազմակերպական
աշխատանքը : Դրա համար պետք և ուղտադործվեն յե-
րիտասարգութեանը կոմիտեիտական աշխատանքի հետ
կապելու և նրան այդ աշխատանքի մեջ ներգրավելու
բոլոր հնարավոր ձևերը :

Կոմյերիտմիութեան շարքերից դուրս գտնվող յերիտասարդութեան մեջ կատարվելիք աշխատանքը չի կարող հանգեցվել միայն նրան ներստերին ու ժողովներին, խմբակների մեջ ներգրավելուն, արտադրութեան մեջ, կոլտնտեսային դաշտերում, բրիգադներում և այլ աշխատանքի գրավելուն: Սակայն կոմյերիտմիութեանը, դրա հետ միասին, լայն աշխատանք պետք է ծավալի խորհրդային յերիտասարդութեան ուրախ կյանքի կազմակերպման ուղղութեամբ: Այս բնագավառում կոմյերիտմիութեան գործունեութեանը դեռ անբավարար է:

Ընկեր Ստալինն ա՛յն խոսքերով, թե կյանքն ավելի ուրախ է դարձել, հիանալի կերպով արտացոլեց մեր մեծ խորհրդային յերկրի ժողովրդի արամադրութեանը: Պետք է ամեն կերպ ոգնել ամբողջ յերիտասարդութեանն ապրելու կուլտուրական և ուրախ կյանքով, ճանապարհ ցույց տալ նրան այդ տեսակետից:

Ի՞նչ է նշանակում այս: Այս նշանակում է, վոր ե՛լ ավելի ուժեղ ու ավելի լայն պետք է ծավալել Ֆիզկուլտ աշխատանքը, առանձնապես կոլտնտեսութեանը: Այս նշանակում է—ավելի լայնորեն արմատացնել թա՛վ պարերը և վոր թե միայն ֆուտբոլիստները, վորոնք, ի դեպ, պետք է ասել, մեկ մոտ մտցված են ոտար բանակից, այդ նշանակում է ավելի լայնորեն տարածել լավ յերգերը: (Ծափահարութուն):

Կոմյերիտմիութեանը պետք է յերիտասարդութեանն ոգնի ոգտվելու յերաժշտական լավագույն յերկերից, այդ բնագավառից դուրս մղելով ամեն տեսակի խառատութեամբ: (Ծափահարութուն):

Իուք պետք է ավելի շատ գրազվեք ամեն տեսակ

յերաժշտական գործիքները մեր խորհրդային յերիտա-
սարդության, առանձնապէս դուզական յերիտասար-
դությանը մոտեցնելու ուղղությամբ: Ճիշտ է, այդ-
պիսի գործիքներ մենք դեռ քիչ ունենք և վորակով
էլ նրանք դեռ այնքան լայր չեն, բայց յես կարծում
եմ, վոր մենք ձեզ հետ միասին թամբում ենք արդյու-
նարերության՝ յերաժշտական գործիքներ արտադրող
ձյուղերը, վորպէսզի մենք ավելի շատ և ավելի լավ
վորակի յերաժշտական գործիքներ ունենանք:

Այդպիսով կոմյերիտական կազմակերպություններն
էլ ավելի սերտորեն կկազմեն մնացած ամբողջ յե-
րիտասարդության հետ: Հարկավոր է միայն մի բան
նկատի ունենալ—չամից դուբս մի՛ «կազմակերպեք»
այդ գործը (ծափահարություն), վորովհետեւ մեզ մոտ
յերբեմն այնպէս են «կազմակերպում» ամեն տեսակի
ժամանցները, վոր մեր խորհրդային յերիտասարդու-
թյունը փախչում է այդ «կազմակերպում» ուրախ
կյանքից: (Ծիծաղ): Ավելի շատ իական ուրախու-
թյուն, ավելի շատ նախաձեռնություն, բազմազանու-
թյուն մտցրեք այդ աշխատանքի մեջ, ավելի քիչ շար-
լոն ու տրափարեա, և այն ժամանակ հաջողությունն
ապահովված կլինի:

Անկասկած, շարունակվում է կոմյերիտական աշ-
խատանքի թույլ բնազատիսը մնալ կին յերիտասար-
դության ներգրավումը կոմյերիտության մեջ: Սրա
մասին բազմիցս խոսվել է: Սակայն մենք ստիպված
ենք այդ մասին մեկ անգամ ևս հիշեցնել կոմյերիտ-
ության տասերորդ համագումարում, քանի վոր
չնայած վորոշ բարելավմանը, աշխատանքն այդ բնա-
զալառում այնուամենայնիվ անբավարար է:

Մի՞թե կարելի չէ բավարար համարել այնպիսի զբաղմունք, յերբ կին յերխտասարդութունը կոմյե-րիտիութեան մեջ մեկ յերըրդից ել պակաս է, յերբ կին յերխտասարդութեան մասնակցութեանն առանձին ազգային մարդերում ու հանրապետութեանն երկրում և մինչև կոմյերխտական յերխտասարդութեան ընդհանուր թվի 10—15 տոկոսը, իսկ կոյանտեութեանն երկրում 100-ից միայն յերեք ազ-ջիկ են կոմյերիտիութեան անդամ և մնացած 97-ը մնում են կոմյերիտիութեան շարքերից դուրս:

Զի կարելի բավարար համարել նաև կոմյերխտուհի-ներին կոմյերխտական կազմակերպութեանն երկրում ղեկավար աշխատանքի ներդրավելու ուղղութեամբ կատարվող աշխատանքը:

Հարկավոր է կին յերխտասարդութեանն ավելի ըս-նորեն ներդրավել կոմյերիտիութեան մեջ, կոմյերի-տուհիներին ավելի համարձակորեն ներդրավել կոմյե-րխտական ակտիվի մեջ ու նրանց մասնակից դարձնել ղեկավարութեանը, այն ժամանակ կոմյերիտիութեու-նը կլինի ել ակտիվ ուժեղ, ել ակտիվ ազդեցիկ: Սա առանձնապես վերաբերում է այնպիսի ազգային կազ-մակերպութեանն երկրում, ինչպես Ուղբեկատանը, Տաջի-կատանը, Թուրքմենստանը և այլն, վորտեղ կոմյե-րիտիութեան կենտրոնի նախաձեռնութեամբ լավ անց-կացվեցին կին յերխտասարդութեան կոնֆերենցիանե-րը: Բայց զբանով չի կարելի սահմանափակվել: Այն-տեղ կան անցյալի, հնի ու կնոջ նկատմամբ ճորտատի-րական վերաբերմունքի շատ մնացուկներ: Դրանք յե-րևան են դալիս նույնիսկ ակտիվ կոմյերխտականների վորոշ մասի մեջ: Այդ մնացուկների դեմ պետք է

սխտեմատիկարար պայքարել՝ մեր վողջ հասարակա-
կան աշխատանքի մեջ կինն յերխոսասարդությանն ե՛լ ա-
վելի ներգրայելլու համար :

Յե՛վ վերջապես վերջին հարցը—յերեսաների մա-
սին : Այս բնագավառը դեռ շարունակում է նույնպես
մնալ կոմյերիտական աշխատանքի թույլ տեղը : Դպրո-
ցական հասակի յերեսաների կազմակերպումը չափա-
զանց կարևոր դործ է առանձնապես այն պատճառով,
վոր դա ուղղակի կերպով կապված է դպրոցական ու-
սուցման հետ : Յերեսաների կազմակերպումն զգալի
չափով հանձնարարված է կոմյերիտմիութեանը : Ար-
դյոք այստեղ ամե՞ն ինչ բարեհաջող է : Վո՛չ : Դուք
ինքներդ զիտեք պիտներական աշխատանքում յեղած
մի ամբողջ շարք խեղաթյուրումների մասին : Հաճախ
յերեսաներին չափից դուրս ծանրարեկոնում են հասա-
րակական աշխատանքով, վորն անդրադառնում է
նրանց ուսման վրա : Յերբեմն պիտներական հավա-
քույթները վեր են ածվում տաղտկալի պարապմունք-
ների, վորի հետեանքով յերեսաները փախչում են
այդ հավաքույթներից և խորչում նբանցից : Պիտներա-
կան հավաքույթները հաճախ անցնում են առանց կոմ-
յերիտմիութեան բավարար ղեկավարութեան, յերբեմն
դպրոցից դուրս : Հաճախ չարաչահում են հուլնեցուցիչ
եքսկուրսիաների, արտելքների և այլնի կազմակեր-
պումը : Յե՛վ վերջապես, դեռ չկա մանկական լուրջ
գրականութեան : Յերեսայի համար դեռ ստեղծված
չէ լավ գիրք :

Ինչպես տեսնում եք, այս բնագավառում թերու-
թյուններ դեռ չափազանց շատ կան : Վո՞րտեղից են
ծագում այս թերութեանները : Դրանք ծագում են այդ

գործի նկատմամբ ունեցած անուշադիր զեկալարությունից: Ապացույց ե հանդիսանում այն փաստը, վոր մեծ թիվով պիտոներական կոլեկտիվներ դեռ չունեն կովարներ: Պիտոներական կոլեկտիվները կովարները պղաղի մասը չի համապատասխանում իր կոչմանը: Շատ հաճախ լինում են այնպիսի դեպքեր, յերբ կոմյերիտական կազմակերպությունները վարպետ պիտոներական կովար առաջ են քաշում հեղինակություն չունեցող մարդկանց: Պետք է լրջորեն զբաղվել յերեխաների կազմակերպությունը բարելավելու գործով:

Մի՛ կարծեք, թե ամբողջ գործը սահմանափակվում է միայն պիտոներական պալատներ ստեղծելով: Դա լավ բան է: Պալատներ մենք կստեղծենք և ունենք այդ հնարավորությունը, բայց, ընկերներ՛ր, բանը միայն այդ չէ: Այժմ, յերբ մանկական հրատարակչությունը կոմյերիտիստական է հանձնված, դուք պետք է ափսոսել մեծ քանակութամբ լավ գրքեր ստեղծեք: Բանն այն է, վոր դուք վերացնեք բոլոր այն թերություններն ու խեղաթյուրումները, վոր կան պիտոներական աշխատանքի պրակտիկայում:

Անհրաժեշտ է, վոր կովարները ուշադիր ընտրությանը զուգընթաց, կոմյերիտական կոմիտեները քարտուղարներն ու անդամներն իրենք հենց ափսոսալի հաճախակի լինեն դպրոցներում ու համալսարաններում, տեղում ուղղեն թերությունները և փորձ ձեռք բերեն մանուկների մեջ կատարվող աշխատանքը ե՛լ ափսոսաբարելավելու համար: (Ծափահարություն):

Ահա, ընկերներ՛ր, կազմակերպական աշխատանքի վո՛ր կողմերի վրա յես կցանկանայի հրավիրել համագումարի ուշադրությունը: Մի՛ մոռանաք, վոր կազ-

մակերպական աշխատանքը միևնույն ժամանակ նուև
դաստիարակչական աշխատանք է: Ուստի և, ընկեր-
նե՛ր, մի՛ արհամարհեք կաղմակերպական աշխատան-
քը: Դուք դիտեք, թե ինչպես մեր կուսակցությունը և
ներա առաջնորդները—Լենինն ու Ստալինը—միշտ բարձր
են դասել ու դասում են կաղմակերպական հարցերը՝
ստանձնահատուկ ուշադրություն նվիրելով կաղմա-
կերպիչների կադրերի պատրաստմանը, մարդկանց ընտ-
րությանը, ճիշտ ղեկավարությանը՝ ներքևից մինչև
վերև, աշխատանքի մեջ ճշգրտություն արմատացնե-
լուն, իրենց յուրաքանչյուր վորոշման կատարումը
մշտապես ստուգելուն և վերջապես ինքնաքննադատու-
թյան ծավալմանը: Այդ հիման վրա յեն, ընկերնե՛ր,
մեր բոլշևիկյան կուսակցության մեջ կերտվել կաղմա-
կերպիչների դորեղ կադրեր, վորոնք հաղթանակում են
յուրաքանչյուր քայլափոխում:

Կոմյերիտմիության դերը մեր յերկրում մեծ է
բոլոր բնագավառներում: Այդ դերնե՛լ ավելի յե բարձ-
րանում յերիտասարդության կոմունիստական դաս-
տիարակության և ուսուցման ասպարեզում յեղած
հսկայական ինդիլերների կապակցությամբ: Մեր կոմ-
յերիտմիությունն իսկապես լենինյան կոմյերիտմիու-
թյուն է և ղեկավարվում է մեր բոլշևիկյան կուսակ-
ցության կողմից: Նա համախմբում է աշխատավոր
յերիտասարդության ամենահամարձակ ու ամենաչի-
ռանդուն մասը, վորը կապված չէ հին արդիլիցիանե-
րի հետ և հսկայական ուժ է տալիս կոմյերիտմիու-
թյանը:

Կուսակցությունը բավականաչափ զնահատում է
մեր լենինյան կոմյերիտմիության այդ դերը, ուժն ու

հաջողութիւնները և տարակուս չկա, վոր կաղմա-
կերտական աշխատանքը բարձրացնելով այն հակայա-
կան խնդիրներէ մակարդակին, վորոնք դրված են
կոմյերիտմիութեան առաջ, կոմյերիտմիութեանը կո-
մունիզմի կառուցման գործում կղատնա ե՛լ ավելի ակ-
տիվ մի ուժ և ե՛լ ավելի արագորեն առաջ կընթանա
դեպի նոր հաջողութիւններ, դեպի նոր հաղթանակ-
ներ:

Կեցցե՛ լենինյան կոմյերիտմիութեանը:

Կեցցե՛ բոլոր աշխատավորներէ առաջնորդ և ուսու-
ցիչ, խորհրդային յերիտասարդութեան լալագուն
բարեկամ ընկեր Ստալինը:

(Համագումարը բուռն ովացիա յե սարքում ընկեր
Անդրեյեվիին: Լսվում են վողջույնի բացականչութեան-
ներ—«Կեցցե՛ ընկեր Ստալինը, ուռա՛»: «Խայ ժիվի
վիլիկիյ Ստալին, ուռա՛»: «Կեցցե՛ Համկ(բ)Կ Կենտկո-
մը, ուռա՛»: «Կեցցե՛ն Կենտկոմն ու Ստալինը, ուռա՛»: Յերկաբ ժամանակ չլռող ուռաներն ու ծափահարու-
թեանները բռնկվում են ավելի ու ավելի նոր ուժով):



Թարգմանիչ Հ. Թուրշյան, խմբագիր Հ. Գասպարյան,
սրբագրիչ Ա. Տ.-Մկրտչյան

Գլավիլիտի լիազոր Շ—1071, հրատ. № 375, պատվեր № 153,

տիրաժ 4000, էնդեքս $\frac{\text{П} 84}{\text{PK}}$

Հանձնված է արտադրության 29/IV 1936 թ.

Ստորագրված է ապագրության 5/V 1936 թ.

Գինը 30 կ.

Հայկուստրոսի սպարուս, Յերեվան Ալլահվերդյան № 27

Пров. 1940 г.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



FL0018417

898

91762 88 4.
-034.



А. А. АНДРЕЕВ

КОММУНИСТИЧЕСКОЕ ВОСПИТАНИЕ
МОЛОДЕЖИ И ЗАДАЧИ КОМСОМОЛА

Армпартиздат, Еревань